



ՓՈՒՆԵՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի և «Հայրենիքի Վահան» պահեստագործի
սպանների միություն հասարակական կազմակերպության
միջև համագործակցության մասին



ք. Երևան

«12» հունվարի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ
(այսուհետ նաև Պալատ)՝ ի դեմս նախագահ Արա Զոհրաբյանի, և

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԱՀԱՆ» ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև Միություն)՝ ի դեմս
տնօրեն Կարեն Հակոբյանի,

բարձր գնահատելով Հայրենիքի հզորացման և հայ ժողովրդի
անվտանգության ապահովման գործում իրենց մեծագույն ավանդը ներդրած
սպանների անձնվեր աշխատանքը,

հաշվի առնելով այն, որ Պալատի կանոնադրությամբ Պալատի առջև
դրված նպատակներից է յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և
արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի
իրականացումն ապահովելը, ինչպես նաև հաշվի առնելով Միության՝
հայրենիքի պաշտպանական ներուժի և Հայաստանի Հանրապետության և
Արցախի Հանրապետության միջազգային հեղինակության ամրապնդման
կանոնադրությամբ սահմանված խնդիրը,

*կնքեցին համագործակցության մասին սույն փոխըմբռնման
հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր).*

* * *

1. Հուշագրի շրջանակներում Պալատը և Միությունը պատրաստակամություն են հայտնում՝

1.1. Համատեղ մշակել և իրականացնել փոխադարձ հետաքրքրություն
ներկայացնող իրավական կամ այլ թեմաների վերաբերյալ ծրագրեր և
դասընթացներ (սեմինարներ):

1.2. Պալատի և Միության անդամների համար կազմակերպել
համատեղ մարզական, մշակութային միջոցառումներ, մրցախաղեր և
նպաստել Պալատի և Միության անդամների փոխադարձ շփման, կապերի
հաստատման և համագործակցության ապահովումը:

1.3. Անհրաժեշտության դեպքում կողմերը կարող են համագործակցել
նաև Հուշագրով չամրագրված ոլորտներում:



* * *

2. Հուշագրի շրջանակներում Պալատը պատրաստականություն է հայտնում՝

2.1. Յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ Պալատի աշխատակազմի և կամավոր փաստաբանների միջոցով Միության անդամների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2.2. Պալատի աշխատակազմի և Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով պարզաբանել «Փաստաբանության մասին» օրենքով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կողմից հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից օգտվելու ընթացակարգը և օրենքի պահանջներին բավարարող Միության անդամներին սահմանված կարգով տրամադրել անվճար իրավաբանական օգնություն:

2.3. Անհրաժեշտության դեպքում (այդ թվում՝ համապատասխան ոլորտում օրենսդրական բացերի հայտնաբերման դեպքում) Միության անդամների իրավունքների արդյունավետ իրացման և պաշտպանության համար օժանդակել օրենսդրական նախագծերի մշակման հարցում:

2.4. Միության անդամների համար կազմակերպել իրավական թեմաներով դասընթացներ:

* * *

3. Հուշագրի շրջանակներում Միությունը պատրաստականություն է հայտնում՝

3.1. Փաստաբանների համար կազմակերպել մարտական պատրաստության (այդ թվում՝ կրակային, մարտավարական) տեսական և գործնական պարապմունքներ:

3.2. Պալատի հետ համատեղ կազմակերպել սպորտային միջոցառումներ:

* * *

4. Եզրափակիչ և անցումային դրույթներ.

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն Հուշագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրությամբ:



4.3. Հուշագրի գործողությունը վաղաժամկետ կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Հուշագիրը վաղաժամկետ դադարեցնել ցանկացող Կողմը պարտավոր է մյուս Կողմին իր մտադրության մասին գրավոր տեղեկացնել ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ ներկայացնելով Հուշագրի վաղաժամկետ դադարեցման պատճառները:

4.4. Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

* * *

5. Հուշագիրը ստորագրող կողմերը.

**Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատ**

**«Հայրենիքի Վահան»
պահեստագործի սպաների
միություն ՀԿ**

նախագահ՝ Արա Զոհրաբյան

տնօրեն՝ Կարեն Հակոբյան